ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

ԱՊՐԻԼԻ 13-14, 2023 Թ.

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը (ՀՊՏՀ), «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն, AMX-ը (Հայաստանի ֆոնդային բորսա և Կենտրոնական դեպոզիտարիա), «ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ-ն և Եվրո-Ասիական ֆոնդային բորսաների միությունը (FEAS) հայտարարում են տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Սալնազարյանի անվան ուսանողական գիտաժողով:

Գիտաժողովի խորագիրն է.

«ՀՀ ԿԱՊԻՏԱԼԻ ՇՈՒԿԱՅԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐՆ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ»

Գիտաժողովին ներկայացված լավագույն աշխատանքներն ու ներկայացումները պարգևատրվելու են: Առաջին երեք տեղերի համար նախատեսված են դրամական պարգևներ.

1-ին տեղ՝ 400,000 ՀՀ դրամ,

2-րդ տեղ՝ 250,000 ՀՀ դրամ,

3-րդ տեղ՝ 150,000 ՀՀ դրամ:

Նախատեսված են նաև խրախուսական նվերներ: Գիտաժողովին ակտիվ մասնակցություն ցուցաբերած լավագույն ուսանողները հնարավորություն են ստանալու փորձառություն անցնելու ոլորտի առաջատար ֆինանսական ընկերություններում:

ՄԱՍՆԱՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

Գիտաժողովին կարող են մասնակցել ՀՀ և ԱՀ բուհերի տնտեսագիտական մասնագիտություններով ուսումնառող բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողները:

Գիտաժողովին ներկայացված բոլոր զեկույցները անցնելու են հետազոտական աշխատանքին ներկայացվող պահանջներին համապատասխանության ստուգում և անանուն գրախոսություն: Գիտաժողովին մասնակցության (զեկուցման) թույլատրվելու են այն աշխատանքները, որոնք գրախոսների կողմից կարժանանան դրական գնահատականի: Գիտաժողովին ներկայացված զեկույցներից լավագույններն որոշվում են գիտաժողովի կազմակերպիչներից կազմված ժյուրիի կողմից:

ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Գիտաժողովին դիմելու համար անհրաժեշտ է լրացնել մասնակցության հայտադիմումը՝ կցելով գիտաժողովի խորագրի շրջանակում իրականացված հետազոտական աշխատանքը: Գիտաժողովին դիմելու վերջնաժամկետը 2023 թ. մարտի 15-ն:

ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Գիտաժողովին ներկայացվող զեկույցների պահանջներին, ինչպես նաև գիտաժողովի վերաբերյալ այլ մանրամասներին կարող եք ծանոթանալ հետևյալ հղումով: